*Տուեալ ի Հռոմ, առ Եկեղեցւոյն Սրբուհւոյն Մարիամու Մաեոր յորջորջելոյ, ընդ մատանեաւ Զկնորսի, յԺԳ. Կաղանդից Նոյեմբերի (20 Հոկտ.) 1631, Քահանայապետութեան մերոյ յիններորդում ամի:*

**Գ. ՆԵՄԵԿ**

*(ԱԿ. Ա., 1913, էջ 551. բնագիր էջ 758:)*

*Մատեան 45, Պողոս Քահանայապետ Ե. յամին Թ. Նամակ 124, էջ 41:*

*Սիրեցեալ որդւոյ առն Ազնուականի, Դեսպանի ամենաքրիստոնեայ արքային ի Կ. Պոլիս քաղաքի:*

## ՊՕՂՈՍ ՔԱՀԱՆԱՊԵՏ ՀԻՆԳԵՐՈՐԴ

Սիրելի՛ որդեակ, Ա՛յր Ազնուական ողջոյն եւ Առաքելական օրհնութիւն: Մեր մեծարոյ եղբօր Մելքիսեդեկի՝ Հայոց Մեծաց Պատրիարքին մեզի ղրկած պատուիրակը՝ սիրելի որդին մեր Զաքարիա վարդապետ, տեղեկացուց մեզ որ, անցեալ տարի, երբ Հռոմէն կը վերադառնար ի Հայաստան, Կ. Պոլիս հասնելով, եպիսկոպոսներէն, քահանաներէն ու ժողովուրդէն առաջնորդ կարգուեցաւ այն տեղի իրենց եկեղեցւոյ վրայ. հոն ան ատեն առաջնորդ եղող Գէորգ[1] անուն մէկը վտարելով, որովհետեւ

---

1 Արդեօք *Գրիգո՞ր . . .*, (Կեսարացին) որ 1601էն մինչեւ 1626 երեք անգամ Պատրիարք եղաւ: